Բ. ՏԱՐԻ ՇԱՐԵՔՇԱԲԹԻ 15 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1899 ԹԻՒ 189

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Դուրսարիոյ համար
Տարեկան 10 Ֆր.
Վեցամսեայ 5 »
Արտասահմանի համար Տարեկան 12 »
Վեցամսեայ 6 »
Եւրոպայի համար
Տարեկան 2.50 ֆր.
Վեցամսեայ 1.25 »

ԳԱՆԹԻԿ ՎՃԱՐԻՆ

Դրանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքից աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կըլլայ։

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել Խմբագրութեանս հասցէին

—

Редакция на вѣстникъ «Шаржумъ» Варна.

Redaction du journal «Charjoum» Varna (Bulgarie)

—

Ձեռագիրներ չեն տրուիր

)(ԴԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

Отговорникъ: Д-ръ Т. Хр. Стояновъ

)(ԴԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)(

ՅՈՒԴԱՅԻ ՀԱՄԲՈՅՐՆԵՐ

Թրանսվալ, Հարաւային-Ափրիկէի այն անհնչան մասն, որ երէկ աղուէսաղցեստ դիւանագէտներու և անկուշտ դրամատէրներու խմբակի մը մտածման առարկան դարձած էր միայն, այսօր, բախտին բերումով, ամբողջ մարդկութեան ուշադրութիւնն իր կողմը սեւեռել տուած է. և ամէն մարդ օրը օրին կը սպասէ անհամբեր հեռագրական նորագոյն լուրերու։ Ասիկա անգամ մըն ալ չեշտել կուտայ թէ՝ մարդ մրշտնորին սիրահար է. Ցրէյֆիւսէն ետք՝ Քրիւկէր։

Ո՞վ կը յուսար որ Պոէրները, խաշնարած մարդիկ, մասաւորական մակարդակով, դրամով, զէնքերով շատ վար հսկայ Ալպիոնի զաւակներէն, պիտի կարողանային այսքան դիմադրել և փայլուն յաղթանակներ տանիլ։ Ամէն անհատ, որ քիչ ու շատ տեղեկութիւն ունէր Անգլիոյ նաւային ու դրամականուժերուն մասին, վստահաբար կըսէր թէ՝ մէկ քանի օրէն Թրանսվալ ընկճուած անգլիական գաղթավայրերէն մէկը պիտի դառնայ։ Սակայն այսօր պատերազմին երեւոյթները ներհակ կերպարան մը կուտան մեր գուշակութեանց, և հեռագիրը մեզի կը ծանուցանէ թէ՝ անգլիացիները ցարդ վճռական յաղթանակ մը չեն կրցած տանիլ և Լէտիսմիթ վերջապէս անձնատուր եղած է։ (*) Այս ծանրակշիռ լուրն ալ կուգայ Պերլինէն, զինուորական ծանրութեան կեդրոնէն, կոմս Հէրպէրթ Պիսմարքի բերնէն, որով կուզէր հպարտօրէն յայտարարել թէ՝ գերմանական ռազմագիտութիւնն է որ յաղթանակած է անգլիական ռազմագէտութեան։ Պիսմարքի երկու սանիկները լաւ ազգուրեր են երկաթէ մարդուն երկաթէ սկզբունքներով։

Վիլհէլմ, մէկ քանի օր առաջ՝ ինչ ինչ գաղթավայրերու խնդրոյն համար խաղաղելիք մը գտնելու, և կամ իր մեծ մօրը որդիական այցելութիւն մը տալու դիտաւորութեամբ՝ Էլպայի ափերէն Թայմլի ափերը կերթար և կը համբուրէր ալեզարդ թագուհին։ Պիսմարքի սանիկը՝ «Բրան լաւ սերտեր է Ցուդայի համբոյրներ ի հարկին շռայլել դէսուդէն իր գերման դրօշին ամենուրեք ծաւալման համար աշխատելու միակ սեռնչէն մղուած։

Երբ Թիւրքիան, համակ հայուարիւններով թաթախուն, հայաջինջ, վայրենարարոյ երկրի մը պատկերը ցոյց կը տուէր քաղաքակիրթ Եւրոպային աչքին առջեւ, Վիլհէլմ, առանց խըսնելու. այցելութեան կուգար Կարմիր Մարգուն հետ Ցուդայի համբոյրներ փոխանակելու. երբ Ցունաստանի քաջարի զինուորներ կը կռուէին իրենց հայրենակիցներուն ազատութեանը համար, կարմիր ֆէսին տակ ծածկուած գերմանական խաչակիր սպաներու կը հանդիպէին։ Իր նախնիքը խաչակիրներ կը զրկէին մահիկին դէմ կռուելու. իսկ այսօր իրենց թոռնիկը անխղճօրէն խաչը մահիկին քով կը կախէ։ Այս պահուս՝ Թրանսվալի մէջ անգլիացի հրամանատարներուն դէմ կան գերման սպաներ. սակայն ասիկա մարդասիրական զղջումէ թելադրուած չէ բնաւ. վասն զի առնոր քով այդ զղջումը կը պակսի բացարձակապէս. այլ իր գաղթավայրներուն ծաւալումին հակառակորդ հանդիսացող Ալպիոնի տակաւ տկարացումին համար միմիայն։

Այս Ցուդայի համբոյրներն ընդունող Ալպիոն իր մրցակից բոլոր տէրութիւններէն, որոնք պաշտօնական կերպով չեղքութիւն յայտարարեցին, սակայն գաղտնածածուկ չի դլացան ամէն ձեռնտութիւն իր հակառակորդին. ո՛չ թէ, ինչպէս շեշտեցինք, տկարին սատար հանդիսանալու բարի մտադրութեամբ, այլ իրենց գաւազ, ապատ հաշիւները մաքրելու սադիսական նպատակով. «կեցցէ կատուն՝ որ լը փորի համար մուկ է բռնում»։

Ալպիոն զգացած է այդ համբոյրներուն կեղծ բլալը, սակայն կը պահէ իր պաղարիւնութիւնը, ապագային մէկիկ մէկիկ փոխարինելու համար. առ այժմ լաւ համոզուած է որ համբոյրներու կը յաջորդէ անպատճառ զողզոլթայի խաչը, տեսնե՛նք կամ պիտի խաչէ, կամ պիտի խաչուի։

Ասդին, Թուրքիոյ մէջ ալ Ցուդայի համբոյրներ փոխանակուեցան և կը փոխանակուին Օրմանեանին և Համիտին միջեւ. միջնորդի դերը կը կատարէ Արթին փաշան։ Միւքդ չես բերեր, Արթին, ասկէ հինգ տարի առաջ՝ Եագաճըդ հիւանդագին օրերուդ մէջ ազգիդ նկատմամբ ունեցած անհուն սիրոյն համար արտասանած խօսքերդ կամ պարզ ըսեմ, խոստովանութիւնդ. ո՞րքան շատ փոփոխութիւն, լեզուն ոսկոր չունի այնպէս չէ՞, Արթին։

Այս կեղծ համբոյրներուն փոխանակումէն ետք՝ ազգն ի՞նչ շահեցաւ։ Երկու ոսկեզօծ դեղահատ։ Օրմանեան իր հրաժարականը եւ առաւ, Սուլթանն ալ Աւոյ կամ Ոսկիկոսութեան ընտրութեան թոյլատուութիւն շնորհեց նորանոր ինչ ինչ ոտնձգութիւններով, որոնց մասին Օրմանեանի կողմէն բողոքի շշուկ մըն ալ չի լսուեցաւ։

Այո՞ դեղահատներէն շատ կլլեցինք, մեր ստամոքսները ծանրաբեռնուած են տակաւին անոնցմով, այլեւս կլլելու ո՛չ ժամանակ ո՛չ ալ մտադրութիւն ունինք։

Արթին և Օրմանեան, լաւ գիտցէք, թէ՝ արտասահմանի և՛ թէ՝ Թուրքիոյ մէջ արդասի աչերով կը դիտուին ձեր՝ մէն՝ մի՝ քայլափոխները. վասն զի ասոնք իրենց ետեւէն կը բերեն կեանք կամ մահ։ Բարի և հայրենասէր եղէք, եթէ կը փափաքիք իսկապէս արժանանալ ամբողջ ազգին համակրանքին, իսկ եթէ վատեր պիտի ըլլաք Մաքսուաներ և Մամբրէներու պէս, սպասեցէք ուշ կամ կանուխ անոր «մահացու գնդակին»։

ԱԻՕ

——)·(——

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Կ. ՊՕԼԻՍ, 10/22 Դեկ.

Քիչ շատ կրթուած տղիկները սեւ օրեր կանցնեն։ Մապի չափ աղատ միտք ունեցող, հիւլէի չափ յառաջադէմ գաղափարի տէր և բրինձի հատիկի մը չափ հասարակական ձգտումներ ունեցող անձերու գլուխն ու սրտին գլուխը միեւնոյն ալիքը ունին։

Թեթեւ կասկած մը, ենթադրական, երեւակայական աղաւաղմութեան և ժողովրդասիրութեան հնարաւորութիւն մը՝ և ամենէն ազդեցիկ անձերը կը շղթայուին, բանտերը կը նետուին, ցկեանս աքսորի կը դատապարտուին և կամ թոյնով կամ պարզ չուանով մը կամ թէ զենդակով մը կը լմննան... Ալիվէր Քրոմուէլի կեանքի վերջին օրերը կամ աւելի ճիշդը Հռոմի Նելսոնին կեանքին իսկական կրկնութիւնն է Երլտրզին պատերուն մէջ։

Մօլլա Զիա Գազասկէրի. Ֆէրուի և այլոց աքսորէն ետքը, ինչպէս անգամ մը գրած էի՝ խուզարկութիւնները և ձերբակալութիւնները աճեցան. շատ մը անձեր ձերբակալուեցան ու ոչնչացան... վերջապէս պոչը հասաւ և Սուլթանի քրոջ Զէնիհէ Սուլթանիէի ամուսնոյն, հոսլաւ ճանչցուած Տամատ-Մահմուտ փաշային։

Մահմուտ փաշայի Օրթագիւղի փառաւոր ու հսկայական պալատը ամէն պոլսեցիի քաջ յայտնի է։ Մահմուտ՝ Սուլթանի քրոջը ամուսինը ամենէն իբր բաւական լուսամիտ անձ մը ճանչցուած էր։

Մօլլա Զիաի աքսորէն ետքը Մահմուտ կզգար որ ատ ուղղը օր մըն ալ իր գլուխը պիտի գայ՝ կծիկը դնելը կը խորհէր։

Դեկտեմբեր 1ին չորեքշաբթի օրը մակոյկ մը կընստի իր երկու անչափահաս զաւակներուն հետ, տունը յայտնելով որ Պէյքօզ կերթայ այցելութեան մը համար և ուշ պիտի վերադառնայ։ Ու փոխանակ Պէյքօզի,

Այս լուրը հաստատուած չէ։
Ծ. Խ.

կելլայ Մօտա-Պուռնի, Գաստը գիւղին քովերը, ուր արդէն փոքրիկ «մուշ»մը իրեն կապաստ եղեր։ Զաւակներուն հետ կը մտնայ «մուշ»ը (փոքրիկ շոգենաւ) և կերթայ դէպի Իշխանաց կղզիներու ու Սիրքէճիի մէջ եղած տարածութիւնը, ու կէ կանցնին Միջերկրական գացող շոգենաւները։ Այդ ատեն ալ Ղալաթիոյ ծովափէն նոր բաժնուած կելլայ ֆրանսական «Բաքէի» շոգենաւներէն մին։ Նախօրօք եղած պայմանին համաձայն նաւը քիչ մը կը դանդաղի, «մուշ»ը կը մօտենայ, փաշան իր զաւակներովը միասին կելլայ նաւ ու . . . Մնաս բարով Պոլիս . . .

Գիշերը գօնաքին մէջ եզակար կսպասէն փաշային, բայց նա չի երեւնար։ Կնոջը նամակ մը միայն ձգած կելլայ սեղանին վրայ, «ես առ յաւէտ կը թողում Պոլիսը. զի կեանքի պայմանները այնչափ անտանելի և զզուելի են հոս ինձի համար, և անհատի կեանքն այնչափ անապահով որ՝ այլեւս անհնար է ինձ հոս մնալ։ Մնաս բարով։»

Հինգշաբթի առաւօտ կանուխ Մահմուտի փախուստի լուրը պալատ կը հասնի։ Մէկ կողմէն Երլդիզի անօթի լրտեսներուն վոհմակները գայլերու պէս Օրթաքօյի պալատը կը պաշարեն և ծառայները կը ձերբակալեն, միւս կողմէն Սուլթանը անմիջապէս Արտաքին գործոց նախարարի ձեռքով հեռագրել կուտայ Ֆրանսական կառավարութեան, որով կը խնդրէ թոյլտուութիւն Տարտանէլի առջեւ մտնել Բաքէի շոգենաւը և Մահմուտի երկու զաւակները առնել, որովհետեւ նախ որ անոնք անչափահաս են, երկրորդ՝ կայսերական ընտանիքին կը պատկանին։ Ֆրանսական կառավարութիւնը, չենք գիտեր Սուլթանի հաճելի երեւնալու համար, թէ՞ համոզուած ըլլալով որ նաւն արդէն թրքական ջուրերէն ելած է, հեռագրով կը համաձայնի։ Բայց նաւը արդէն Տարտանէլը անցած կըլլայ։

Սուլթանը հեռագրել կուտայ իր ամէն զեսպաններուն Մահմուտի հետքը գտնալ և աշխատիլ զանի համոզել որ վերադառնայ, և մանաւանդ չանալ երկու տղաքները, իբր կայսերական տան անչափահաս անդամներ իշխանութիւններու ձեռքով խլել ու վերադարձնել . . .

Խայտառակութիւնը հսկայական է։ Փախչողը Սուլթանի փեսան է, անոր քրոջը հետ քսան տարի սիրով ապրած անձ մը . . . ի՞նչ երաշխաւորութիւն որ Զէնիհէ հանըմըն ալ վաղը կծիկը չի պիտի դնէ էֆէնտիին ու զաւակներուն եաւէն . . .

Ամէն ջանք ի զուր, թռչունը թռաւ, բռնելը անհնար է, ու հասարակ ճնճղուկ մը չէ, այլ խոշոր բազէ մը։ Փեսան որ կը վախչի իր աներձագին ձեռքէն, ալ հասկցէք Մեացածներու վիճակը։

Զիննիհէ հանըմը խստիւ կը հարցաքննուի և խիստ հսկողութեան տակ է։

ԲԱԺ

Պ. Թ. Փ-ԻՆ

Պարոն Չալիժեր ձեր եւ ձեր պաշտպանած անձին համար երկար բարակ գրելով «Շարժումի» սուղ էջերը զբաղեցնել. զալով իմ անկեղծութեան այդ ալ ժողովուրդը լաւ կը հասկնայ, պէտք չունիմ ձեզ նման ինքնաքովասանքի, դաղափարս ասկէ առաջ ինչ որ էր, հիմակ ալ նոյնն է, բնաւ չպիտի փոխուի եւ ինչ որ ալ գրէք ոնպատասխան պիտի մնաք։

Ց. Ա.

——)·(——

ՆԻՒ-ԵՕՐՔԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՍԱՐԱՖԵԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

—〓—

Վերջին տարիներս Ամերիկայի հայոց կեանքը մատնված է մեռելային ցրտութեան. հանրային կեանքն, հասարակական նոր շարժում ոչ միայն գոյութիւն չունի, այլ եղածն էլ լճացել, կանգ է առել՝ անտարբերութեան հասնելու աստիճան. հետեւեալ ընկերութիւնների անգործ, լոկ անուանական գոյութիւնը պերճախօս փաստ կարող է համարուել, ահա.

— 1897 թուին աղմկալի հարայ հրոցով Նիւ-Եօրքում կազմվեցաւ երկու ընկերութիւն «Բարեգործական» և «Որբախնամ» անուններով։

Բարեգործականը դեռ չը կազմակերպված՝ Նիւ-Եօրքի հարուստ աղաներն ու աղայականները խանդավառ ոգեւորութեամբ պատրաստականութիւն յայտնեցին՝ մասնակցել ընկերութեանը, ասլակցելով այդ կազմակերպութեանը բարոյապէս և, որ գլխաւորն էր, Նիւթապէս։

Ի հարկէ, ընկերութեան նախաձեռնողները, այն մի քանի չքաւոր, բայց դաղափարական երիտասարդները կարօտ չէին աղաների բարոյական ասլակցութեանը, սակայն շատ պէտք էր զդացվում Նիւթականի, դրամի. մանաւանդ այն միջոցին, երբ ամեն օր նորանոր խումբեր էին ժամանում Նիւ-Եօրք՝ շատերը սոված, ծարաւ, մերկ, անօգնական, արդահատելի վիճակում, որոնց պէտք էր գոնէ ժամանակաւորապէս պատսպարել, կերակրել. և, հենց այս ճնշող պարագաների տակ, տեղի աւին, մտածելով թէ աւելի դրամի պէտք կայ, քան սկզբունքի վրա յատմանելու, իսկ աղաների յօժարակամ ասլակցութիւնը, մանաւանդ Նիւթականի լոզմից, մտածեցին, կարող էր օգտաւէտ լինել՝ մեղմելով տարաբաղդ թշուառների վիճակը . . . Դատակարգերի մէջ բանակցութիւնները սկսվեցին, կանոնադրութեան զանազան կէտերը փոփոխվեցին և համաձայնութիւն գոյանալով՝ ընկերութիւնը կազմվեցաւ։ Ոգեւորութեան բոպէին շատերը, նոյնիսկ անտարբերներից, ուրախութեամբ դրվեցին անդամ, լաւ-վատ ընտրվեցին վարչութիւն, խորհրդատու անդամներ և քիչ ժամանակից յետոյ ընդհանուր հանդանակութեամբ գոյացաւ մի փոքր դրամագլուխ՝ 900 և մի քանի տասնեակ դոլար, որ վարչութիւնը ստանալով՝ սկսեց հոգալ չքաւորների ամենատնհրաժեշտ պէտքերը՝ մինչեւ սպառիլը. անցան մի քանի ամիսներ. դիմում եղաւ անդամներին, բայց դրանք ղլացան վճարել նշանակված չնչին վճարը. հանդանակութեան մասնակցողներից շատերը ապառիկները չվճարեցին. դրանց շարքումն է և Պ. Գ. Գիլպէնկեանի 200 տոլարը. որի համար մի քանի անդամ դիմվել է, իսկ վերջինս պատասխանել է թէ՝ տաղնապը արդէն անցել է, այլեւս ոչ ընկերութեան պէտք կայ, ոչ դրամ բաժանելու կարիք, էլ ինչո՞ւ վճարեմ ապառիկը։ Այսպէս մեծ դժուարութեամբ կազմված հիմնարկութիւնը երեսի վրա ձգվելով՝ ընդհանուր մոռացութեան է մատնված. ոչ հետաքրքրվող կայ, ոչ հարցնող, ոչ հաշիւ պահանջող. կայ միայն անուանական, գործով մեռած ընկերութիւնը, մի փոքրիկ դրամագլխով, որը մնում է զանձապահի մօտ, ինկ վարչութիւնը վաղուց լուծված, ցրված է։ Եատ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԻՄ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԷՍ

—〓—

1894ի դեկտեմբերի վերջերն էր, երբ քանի մը ընկերներով Լոնտոն կը հասնէինք։

Ընթերցողը չէ մոռցած անշուշտ այն բուռն ոգեւորութիւնը զոր կը ներկայէր՝ վերոյիշեալ թուականի ընդհանուր հայութիւնը։ Սասունի դէպքը եկած յուզած էր բովանդակ քաղաքակիրթ աշխարհը եւ տեղի տուած Եւրոպական համերգի ի նպաստ հայոց հնչման, որով ամէն հայ պահ մը յուսաց, որ ազատութեան նախընթաց օրն էինք, որ հայուն ալ արշալոյսը ծագելու մօտ էր զի մարդասէր քրիստոնեայ Եւրոպան վերջապէս լսեց տառապեալ հայուն ձայնը ու փութաց ազատելու զայն բարբարոսի ճիրաններէն . . . Դառն յուսախաբութիւն սակայն։

Այսպիսի ոգեւորութեան պարագայի մը՝ երբ ամէն հայու սիրտը ուռչած էր ազատութեան վեհ զգացումով. շատ բնական պիտի լինէր անշուշտ քանի մը երիտասարդաց դէպի կռուի դաշտ դիմելու տենչերնին։

Բաւական ժամանակէ ի վեր՝ մենք երեք հասակակից ընկերներ, զաղթականի յատուկ ճակատագրով մը հանդիպած էինք մէկ մէկու եւ սիրած մէկզմէկ։ Իսկ ժամանակի ընթացքին մէջ այդ պարզ ընկերական մտերմութիւնը կը փոխուէր յեղափոխական դաղափարով իրար հետ կապուելու. ալ հաստատ կը որոշէինք իրարու մէջ, որ միջոցներու հետամուտ ըլլալով մեր բոլոր ուշադրութիւնը կեդրոնացնէինք հայրենիք երթալու եւ մեր յեղափոխականի պարտքը գործնականապէս կատարէինք։

Ուստի յիշեալ թուականին վերջապէս կը յաջողէինք մեր վաղուցուան շոյած ու փայփայած նպատակը իրագործել։

Հասնելով Լոնտոն մեր առաջին բնելիքը՝ իր Հնչակեաններ, Հնչ. կեդրոնը ներկայանալն էր, ուր նախ շարք մը հարցեր, զորս ժամանակէ մը ի վեր ծագում առած էին կեդրոնի շուրջը, պիտի լուսաբանուէին եւ մեր մտքերը հանդարտէր. ու ապա մենք նոյն կեդրոնի հրահանգին համաձայն պիտի դիմէինք մեր նպատակին. իսկ հակառակ պարագային. անկարելի պիտի ըլլար մեզ համար ընդունիլ զայն իբր օրինաւոր կեդրոն Հնչ. կուսակցութեան ու անսալ անոր ոեւէ խորհուրդին կամ թէ ոեւէ կապ պահպանել անոր հետ։ Սոյն խնդիրները մեզ հետ սերտ առնչութիւն ունենալով, զայն անձամբ յուզելը թէ պարտք մըն էր մեզ համար եւ թէ անհրաժեշտ ապագայ վստահութեան տեսակետէն։

Վերջապէս կեդրոնին հետ տեսակցեցանք եւ երկար ժամերով խօսիլ վիճաբանելէ վերջ, նոյնիսկ այդ տեսակցութեան մէջ կարգ մը սարսռացուցիչ երեւոյթներ, որոնք ճիզուիթներուն միայն յատուկ է, մեզ զզուանք պատճառեցին, դուրս եկանք տնկէ՝ մեր հաստատ դիրքը որոշելով ու վերջին խօսքն ալ իրենց յայտնելով զոր այն ատեն կը կազմէին այդ հսկայ մարմինը Պ. եւ Տիկին Նազարբէկեանք Ն. Կ. եւ Սուրէն կոչուած թափթփուք մը, որ իր մէջքը իրած հրացանակով աւելի դոնապանի տպաւորութիւնը թողուց մեր վրայ քան թէ Հնչ. կեդրոնի մը անդամին։

Իմ նպատակս բոլորովին հեռու է այս տողերով ծանրանալ Հնչակեան կուս. կեդրոնի պակասութիւններուն վրայ. այլ մատնանիշ ընել անոնց ներկայացող բազում անկեղծ հնչակեաններու եւ նոյն իսկ մասնաճիւղերու արդարացի դիտողութիւնները խեղդելու համար բրած ջանքերն այնպիսի քսութիւններով, լրտեսութիւններով, զրպարտութիւններով որ ըսելը իսկ մարդուս զզուանք կազդէ։

Ուստի ես կանգ կառնեմ մի այլ երեւոյթի առջեւ, որը չարժանի եղաւ սոյն տողերուն։ Մի երեւոյթ զոր հաւատացած եմ թէ շատերը դեռ չեն կրցած անոր խորը թափանցել եւ տրամադիր են միշտ խալուել զոհ երթալու այս ու այն թերթին, այս ու այն խմբագրին գրածին, հրատարակածին. թերթեր, խմբագիրներ, որոնք այլանդակ հրէշութիւններու չափարան են իսկապէս եւ ոչ այլ ինչ։ Խմբագիրներ ունինք, որոնք իրենց յեղյեղուկ ու անսկզբունք յատկութիւններով եւ հրատարակութեամբ դիւրաւ կը յաջողին հասարակութեան պարզամիտ մէկ դասակարգը մոլորելու, մթացնելու,

յարմարում է Ամերիկայի հայոց ներ՝այ անտարբերութեանը՝ 98 թւի 180 «Մշակ»ի առաջնորդողի առաջին տողերը. «Մենք սիրում ենք պարծենալ մեր հասարակական հիմնարկութիւններով, բայց ոչ մի ջանք չենք գործ դնում նրանց գործունէութիւնը զարգացնելու և ճոխացնելու համար։ Գեւորութեան բոպէին ուրախութեամբ գրվում ենք անդամ այդ հիմնարկութիւնների և նոյնիսկ չենք վերանորոգում մեր անդամակցութիւնը՝ տալով ընկերութեան այն փոքրիկ վճարը, որ մենք մտցրինք ընկերութեան նախահաշւի մէջ՝ ծախսելու համար»։

Երկրորդ՝ առաջնութեան կարգով, յիշատակութեան արժանի է Նիւ-Եօրքի «Որբախնամ Տիկնանց Ընկերութիւնը». նոյն, 97 թւին կազմվեց այդ ընկերութիւնը. մինչեւ անցեալ տարի ընկերութեան հաշւով 30 որբ էր խնամվում և այդ քիչ բան չէր և մեծ պարծանք էր Տիկինների համար, բայց, ցաւալի է ասել, ընկերութեան ատենապետուհին մեռնելուց ի վեր չար նախանձը ընկել է արիստոկրատուհիներից կազմված ընկերութեան մէջ. անդամներից իւրաքանչիւրը ցան կանում է անպատճառ ինքը լինել ատենապետ և, ինչպէս լսվում է, այդ պաշտօնի վրա մէջները համաձայնութիւն չկայանալով՝ շատերը հրաժարվել են ու քայքայումը վաղուց սկսվել է՝ ի վնաս որբերի։ Իսկ գալով մի քանի տասնեակ որբախնամ, ընթերցասիրաց, դպրոցասիրաց և այլն... մանր մունր ընկերակցութիւններին, անշան բացառութեամբ, անուններն անգամ չի յիշվում։

Անտարբերութիւնը, անպարտաճանաչութիւնը, միայն Նիւ-Եօրքի ընկերութիւնների բաժինը չէ. 97 թւի խանդավառութիւնը և սիրալիր վերաբերմունքը դէպի նորեկ փախստականները ու հայրենիքում մնացած թշուառները՝ յատկապէս դէպի որբերը. յիշատակութեան արժանի է, և, մասնաւորապէս, միութենական Ամերիկայի հայոց ցոյց տուած արտակարգ եռանդը, մարդասիրական գովելի ձգտումը՝ դէպի իրանց արիւնակիցները. սակայն ողեւորութեան յաջորդած այժմեան ցրտութիւնը մութ ստեր է ձգում դեռ երեկուայ խանդավառութեան վրա. ի՞նչպէս բացատրել այդ երկու ծայրայեղ երեւոյթը. արդեօք փախստականների քաշած տառապանքը, խըզճալի վիճակը ի զուր շարժեցին բաղդաւորներին՝ մտաբերելու իրանց հայրենակիցներին։ Կարեկցելու համար, թէ չէ, ընդհանուր հոսանքից մղված՝ օտարների օրինակին հետեւելով էր, որ «ազգասիրաբար» կամեցան ցոյց տալ նրանց թէ իրանք էլ հայրենասէր են. այսպէս թէ այնպէս, սկզբնաւորութիւնը ուրախալի, մխիթարական, իսկ վերջաւորութիւնը խիստ տխուր, խիստ ցաւալի է. ահա այսպէս է մեր ընկերութիւնների ներկայ անհանձելի կացութիւնը։

Ընկերութիւնների ներկայ անհանձելի վիճակը համառօտ նկարագրելով, չենք կարող լռութեամբ անցնել Սարաճեան եպիսկոպոսի ցոյց տուած պաղ վերաբերմունքը դէպի հասարակական հիմնարկութիւնները, — երկու խօսքով չարձանագրել նորա բացարձակ անտարբերութիւնը դէպի այդ օգտակար, հանգամանքների բերումով ծնված հաստատութիւնները. հակառակ իր անկարող լինելու մասին շատերի կազմած անպատշաճ կարծիքի, կային շատերը, որ հաւատացած էին թէ Սարաճեանը իր նոր թեմում օրինակելի գործունէութիւն ցոյց կտայ. հովանաւորելով, աջակցելով և խրախուսելով գոց եղած հիմնարկութիւնները, ու, բացի դրանցից, նոյնիսկ նորանոր հանրօգուտ հաստատութիւնների սկիզբ պիտի դնի անձամբ։ Գեղեցիկ երազներ... մինչդեռ մենք ճանաչում էինք թէ ինչ «բարի պտուղ է» Սարաճեանը, արտաքսմանեան մի թերթ Սարաճեանի Պարսկաստանի գործունէութիւնը (.*.) նկարագրելով՝ անման ներբողներ շռայլեց այդ անպուղական կղերի հասցէին և դեռ շարունակում է նոյնը... այդ վիժուկ խմբագրի ինչ փոյթն է, թէեւ ինքն էլ գիտէր, որ իր հրատարակածը ճարտարութեամբ յերիւրված պոչաւոր սուտեր են. բայց... իր շահը այնպէս էր պահանջում և այսօր իր ցանածի արդիւնքը վայելում է. ու այս հոկայ կղերը կենսական խնդիրները աչքաթող՝ երեսի վերայ ձգած, աշխարհութեամբ խնամք է տանում որ, առանց զանցառութեան, ամենայնտին գիւղումն էլ, ուր երկու տասնեակ խղճուկ հայ բանւորներ կան, ամենայն փութկոտութեամբ «խոհուն» անձերից հոգաբարձութիւն ընտրվի, բայց ի՞նչի համար. երեւի ընթերցողը պիտի կարծէ թէ Մ. Նահանգներում հայկական դըպրոցների թիւը օրից օր շատանում է և հոգաբարձութիւնները Սարաճեան եպս.ի բեռը թեթեւցընելու համար են կազմվում։ Զը խաբվէք, մենք մի հատիկ դըպրոց անգամ չունենք այս ազատ հանրապետական երկրում, ուր ամեն ազգ իր լեզուն ուսուցանելու բացարձակ արտօնութիւն ունի։ Մեր մատաղ սերունդը, շնորհիւ տգէտ ծնողների, շնորհիւ ընտանեկան դաստիարակութեան բացակայութեան, շնորհիւ թեմական Սարաճեան եպիսկոպոսի անհոգութեան, մայրենի լեզուի հետ կը կորցնի և ազգային զգացմունքը։ Մեծ Մարդասպանի աչքը լոյս, որովհետեւ արի, արհամարհելի ներքի պակաս թողածը ժամանակն ու միջավայրը կը լրացնեն. այն էլ մեր անհոգութեամբ։ Ապա ի՞նչի համար են հոգաբարձութիւնները, իրաւունքով պիտի հարցնէ տողերս կարդացողը. հոգաբարձութիւնների ընտրութիւնները երկու դիւրաւոր նպատակ ունեն. առաջին՝ որ Սարաճեան և դասակարգի ոճիրները դիւրութեամբ հայթայթվի, երկրորդ՝ որ իր սիրելեալ յատկամական լրագիրների համար բաժանորդներ գտնեն։ Այս ընտրութիւնների տակ մի գաղանիք կայ թաքված, որ այլեւս գաղանիք չէ. ձեռքի տակից արդիւնք յառաջդիմական թերթերի տարածվելը և յատկապէս «Հայրենիքի». այս մասին ձեզ արդէն յայտնի է, թէ ինչ սուր միջոցի են դիմել Սարաճեանի օրգանի երկու սիրացու խմբագիր կոչված արարածները։ Ահա Սարաճեանի գործունէութեան կլոր պատկերը։

Հ. ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆՑ

Ուստր, 30 Նոյեմ.

ՆԱՄԱԿԱՑՈՒՄ

—

Թէեւ Թադէոս Դէորգեանի հայրը Ա. Պոլսեցի է, բայց ինք շատ պզտիկուց Հասքօյ երթալուն համար տեղացի կը սեպուի եղեր, ուրեմն իր խնդրենք ամէն անոնցմէ որոնք գիտեն անոր հասցէն կամ ուր գտնուիլը. հաճին խմբագրութեանս իմացնել։

——).(——

մանաւանդ ատոնք իրենց զօրավիգ ունենալով կարգ մը յայտնի եւ անայտ վիժուկներ կը խառնեն մոխիրը՝ իրենց սեւ ամօթը ծածկելու եւ կոծերնին ներկելու դիտումով... եւ ատոնք բոլորն ալ սակայն յանուն յեղափոխութեան կը խօսին, կը ճառեն. կը բրդեն առանց ոչինչ ընելու, առանց մասերնին արիւնելու։ Ու ատոնք կը յարձակին նոյնիսկ յանուն յեղափոխութեան, յեղափոխական միւս եռանդուն ու փորձառու գործոն երիտասարդութեան վրայ անուանելով զայն՝ սրիկայ, անբարոյական, վնասակար, կործանիչ, քանդիչ եւ նոյնիսկ (լսեցէք) թշնամի հայութեան, եւ դեռ ինչ որ կուզես, այդ մեր իմաստակները թոյլ կուտան իրենք իրենց ըսելու. եւ սակայն նկատելու կէտը սա է որ մեր հաւարակութեան մէջ կը գտնուի դեռ դասակարգ մը, որ կը քաջալերէ այսպիսի հրէշային թելերու շարունակութիւնը։

Իմ կարծիքով, եւ նոյնիսկ քանի մը փաստեր ալ ցոյց կուտան, որ մեր մէջ կուսակցական ոգին տիրապետած չէ հոն, ուր իրական գործ եղած է. ուր իրական գործիչներ գտնուած են։ Այս փաստերը յատկանշական են թէ ընդհանուր տեսակէտով եւ թէ մասնաւորապէս ներքին գործունէութեան տեսակէտով։

Ընդհանուր տեսակէտէն քննելով մենք կը տեսնենք որ դեռ «Հնչակ»ի լոյս տեսնելէն առաջ, «Արմենիա»ն հրապարակ գալուն անմիջապէս հայութիւնը բորբոքվեցաւ անոր շուրջը. իբր յեղափոխական թերթի մը, յեղափոխական ջատագովի մը, ու երկար չի տեւեց կոմիտեցաւ «Հայոց Հայրենասիրաց Միութիւնը» բան իս այդ ընկերութեան կազմութիւնը ոչ այնքան «Արմենիա»ի ջանքերուն էինք պարտական, որքան ժողովրդի այն ժամանակի ոգեւորութեան, ձգտման ու իղձերուն. ժողովուրդը հասած էր այլեւս այն սահմանը ուրկէ փոքրիկ առիթ մը պիտի նետէր զինքը յեղափոխութեան գիրկը։ Իսկ կը յիշենք նոյնպէս որ նոյն Հայրենասիրաց Միութեան կազմուելէն անմիջապէս վերջ «Արմենիա»ն սկսեց «քիչ մրն ալ համբերութիւն» քարոզել իր հեւեւողներուն, կամ իր կուսակիցներուն։ Համբերութեան քարոզը որքան ալ ուշիմութենէ յառաջանայ, յեղափոխական նախնական շրջանին մէջ, մանաւանդ անտեղի է. ասիկայ մասնաւոր շրջաններէն մինչեւ ընդհանուր երեւոյթներու մէջ փորձառու անձեր հաստատած եւ խիստ բնական զատած են։ Ժողովուրդի մը վրայ քարոզը կրնայ իր տպաւորութիւնն ու իր օգուտը յառաջացնել երբ այդ քարոզին գործը կը հետեւի. հակառակ պարագային անվստահութեան եւ յուսախաբութեան տարտամ զգացումը ներշնչելով ժողովուրդին չպիտի կարելի ըլլայ ոգեւորել զայն. իսկ առանց ոգեւորութեան յեղափոխութիւն ընելն ալ անկարելի է։ «Արմենիա»ն այս գրութեան մէջ էր երբ Երեւան եկաւ «Հնչակ»ը որը աւելի լաւ ըմբռնելով ժամանակի ոգին ու պահանջը գործնականապէս ցնցեց հայութիւնը։ «Հնչակ»ի Երեւան գալէն շատ չանցաւ Հայրենասիրաց Միութիւնը խափանուեցաւ։ Ո՞ւր գացին. ի՞նչ եղան այդ «Միութեան» զօրավիգները այնպիսի ժամանակի մը մէջ, երբ գործը շարունակելը միակ պարտականութիւն պիտի լինէր այդ միութեան անդամներուն համար։ Ատոնք անբաւական գտնելով «Արմենիա»ի տարտամ քարոզները ու համբերութեան խրատները՝ թեյուեցան մեծ մասամբ «Հնչակ»ի կողմը եւ սկսեցին իսկապէս գործել. սա շատ յատկանշական է մեր յեղափոխութեան սկզբնական շրջանին մէջ, շատ բնորոշ է նաեւ մեր ժողովուրդին կեանքի համար։

Ահա այդ ժամանակն կսկսի «Արմենիա»ի յարձակումը «Հնչակ»ի դէմ. «Արմենիա» այլեւս դարձաւ գիշերուան մթութեան մէջ խոպոտ ձայներ արձակող լուն, որը իր ընթերցողներուն բացի չարագուշակութիւններ ներշնչելէ ուրիշ բանի մը չի ծառայեց։ «Արմենիա»ն բնականաբար պիտի յարձակէր «Հնչակ»ի կամ Հնչակեան կուսակցութեան վրայ. իբր իր միակ հակառակորդի. եւ բրաւ նա ինչ որ չէր վայլեր՝ ոչ թէ խմբագրի մը, այլ ամենաազնիւ փողոցային անձի մը. նա հրաժարուելով տարրական գիտակցութեան սահմաններէն, ինքզինքը գոեհիկի մը կարգը դասելով՝ անուանեց Հնչակեանները անիշխանական. ձայնակցելով Թուրք կառավարութեան... «Արմենիա»ն երբէք ուշք չի դարձուց իր շուրջը տեսնել գի-

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Բարիզի դատարաններու պաշտօնաթերթը կը ծանուցանէ թէ «Օրօր» լրագրի երեք խմբագիրները և պատասխանատուն 9րդ ուղղիչ դատարանին առաջ ներկայանալ կոչուած են դատուելու համար, Սուլթան Համիտի նկատմամբ նախատալից լեզու մը գործածած ըլլալնուն պատճառաւ։

Այս կոչը եղած է Թիւրք կառավարութեան դանգատին վրայ որ կերեւի թէ օժանդակութիւնը կը վայելէ, Պոլսոյ ֆրանսական դեսպան Քոնսթանի։

Ազատամիտ և արդարասէր Ֆրանսայի բարքերուն ըսելիք չկայ։

—Անգլիական կառավարութիւնը Թրանսվալի իր զօրքերուն հրամանատարութիւնը յանձներէ Սըր Բոպէրին, որ յայտնի եղած է Աղուանիստանի և Հնդկաստանի մէջ, իսկ սպայակոյտի պետ կարգուած է Լորտ Քիշներ որ հռչակուեցաւ Սուտանի մէջ Մահտիականները յաղթելով։

Լորտ Քիշներ արդէն Աղեքսանդրիա հասած է և շուտով պիտի ուղեւորի Թրանսվալ։

—«Կաղէթ Մակէնզուրկ» Պրիւքսէլէն հեռագիր մը ստացած է, որով կը հաղորդուի թէ Թրանսվալի նախագահ Քրիւկէր պատրաստ է խաղաղութեան դաշինք կապել եթէ Անգլիա համաձայնի Պօէրներուն ըրած պատերազմական ծախքերը վճարել և չը պնդել Ռոլանտէրներուն պատերազմէն առաջ ունեցած արտօնութիւնները լայնցնել։ Իսկ եթէ Անգլիա պատերազմը շարունակէ այն ժամանակ Քրիւկէր և Շոէյն կոչ պիտի ընեն Պօէրներուն և Քապի գաղթականութեան որ Քապի երկիրը անկախ հրատարակեն։

—Հնդկաստանի անգլիական զօրքերու գլխաւոր հրամանատարը կառավարութեան խնդրանքին պատասխանած է թէ չորս գունդ հետեւակ, մարզուած տեղացիներէն, և մէկ բաժին թընդանօթաձիգ զօրքեր պատրաստ են անմիջապէս Հարաւային Աֆրիկէ ուղեւորելու։

—Հնդկաստանի փոխարքան հեռագրած է Անգլիոյ նառավարութեան թէ՝ սովատանջ նահանգներու ցանքերը շատ դէշ են և օգնութեան կարօտ եղողներու թիւը 2,226,000ի կը հասնի։

—Քափի անգլիական իշխանութիւնները Պոէրներու համակիր եղողներէն շատերը կը ձերբակալեն և կը դատապարտեն։

—«Մօրնինկ Փոստի» թղթակիցը Պ. Զէրշիլ որ գերուած էր և Բրեատորիա կը դանուէր, յաջողեր է փախչիլ, սակայն նորէն բռնուեր է։ Պ. Զէրշիլ ամսական 1000 ստէրլին կստանար, և այդ վարձատրութեանը կատարելապէս արժանի ըլլալու համար ուղած է իր պարտականութիւնը լիովին կատարել։

—Ամերիկեան թերթերը հետզհետէ թշնամական դիրք կը բռնեն դէպի Անգլիա։ Միացեալ Նահանգներու կառավարութեան կառաջարկեն բարոյական ճնշում գործ դնել Անգլիոյ վրայ որ, պատերազմի միջազգային մարդասիրական դաշինքներուն համաձայն։

—Սերպիոյ Ալեքսանդր թագաւորը դեկտեմբեր 6ին, Ս. Նիկողոսի տօնի առթիւ պիտի ներէր Միլանի պատճառաւ վերջին անգամ դատապարտուած քաղաքական յանցաւորներուն։

—Սուլթանը Սաֆի պէյը Փարիզ ղրկած է Մահմուտ փաշան համոզելու և Պոլիս վերադարձնելու համար։

—Զինուորական վերատեսչութեան անդամներէն մին, Մէհմէտ փաշան Միտիլինէ աքսորուած է։

—Զարի անուանակոչութեան առթիւ Սուլթանը և Զարը սիրալիր հեռագիրներ փոխանակած են։

—Տիպրաի մէջ խռովութիւններ տեղի ունեցեր են. Սկիւպէն վաշտ մը հետեւակ և Բրիշթինիէն դունդ մը հեծելազօրք խռովութիւններու տեղը ղրկուած են։

—Ֆրանսական հռչակաւոր «Օրօր» լրագրին, որ յետադիմականներու դէմ կատաղի կռիւ կը մղէր, մանաւանդ Տրէյֆուսի դատի ժամանակ, խմբագիրներէն մին, կորովի Գլէմանսօ ինչ ինչ անհամաձայնութիւններու պատճառաւ հրաժարած է խմբագրութենէ։ Գլէմանսօ իր կորովի գրիչով հայերուս դատն ալ կը պաշտպանէր։

—Լոնտոնէն «Էնտէբանտանս Պէլժ»ի կը հաղորդեն թէ Քվինսթաունէն մինչեւ Օրանժ Ռիվէր բոլոր բնակիչները ապստամբած են անգլիացիներու դէմ։

—Ֆրանսական խորհրդարանէն կազմուած յանձնաժողովը միաձայնութեամբ ընկունած է նախարար Լոգրուսի առաջարկը—ծովափերը ամրացնելու և նաւատորմիղը զօրացնելու համար 500,000 վարկ մը բանալ։

ԹԱՏՐՈՆ «ԱՆԼԻՎ ՍԼԱՎՕՖ»

«Վէսէլլօ» հայ թատերական խումբը, վաղը գիշեր, Դեկտ. 16, պիտի ներկայացնէ՝ առաջին անգամ ըլլալով «Անատոլու Փէյ Տիւեիւնի» երգախառն-զօմէտի 4 արար։

Ժիմնաստիք, աքրօպաթ և պալէթ Օր. Քաթինայի կողմանէ։

Ե. ՃԱՆԿԻԼԷԱՆ

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ
ԾԽԱՎԱՃԱՌԱՆՈՑ

Թիւ 389 Իսկիլէ-պաշի

Կը վաճառուի ծխախոտ, բօսթայի եւ աղերսագրի ամէն տեսակ բուլեր նաեւ զանազան տեսակ սիկարներ։

94 Թուականին հրապարակ եկած Պուլկարիոյ զանաժառանգ Պորիսի պատկերազարդ քառթ-փոսթալներ, որ այժմ չեն գործածուիր։ Նոյնպէս եւ կը վաճառուի «Շարժում»։

Շարժումը կը ծախուի նաեւ. Նամակատան դիմաց նոր բացուած փոքրիկ գրատունը։

ՊՕՐՍԱ

Վառնա 10 Դեկտեմբեր

Վաճառ	Լիպրա	Ֆրանք	
ՊՈՒՂՏԱՑ	53—57	9—9.50	
ՄԻՍԻՐ	54—56	5—6.20	
ԱՐԲԱ	—	—	եօզ
ԵՈՒԼԱՖ	—	—	»
ՖԱՍՈՒԼԵԱ	—	—	»
ՏԱՐԸ	—	—	»

Առապա	Լիպրա	Ֆրանք
ՊՈՒՂՏԱՑ	55—60	9 50—11.20
ԱՐԲԱ	38—44	6.50—7.40
ԵՈՒԼԱՖ	35—36	5.20—5.30
ՄԻՍԻՐ	55—57	6—7
ՏԱՐԸ	55—58	5.50—60
ՖԱՍՈՒԼԵԱ	100 կիլօ	12—20

Հէր կիւն կէլէն մալ

ՊՈՒՂՏԱՑ	25—30	առապա
ԱՐԲԱ	8—10	»
ԵՈՒԼԱՖ	1—2	»
ՖԱՍՈՒԼԵԱ	3—4	»
ՄԻՍԻՐ	3—4	»
ՏԱՐԸ	1—2	»

Առապա մուամէլէսի դաքօլէոն 22.60 ֆրանք հիսապը իլէ տիր։

Печатница „Взаимность“ Варна։

տելու համար թէ ի՞նչն էր պատճառ որ հայութիւնը իրմէ ձեռք քաշելով ինկաւ Հնչակեանութեան գիրկը, չուզեց կենսական խնդիրներով հետաքրքրուիլ ու բաւականացաւ միայն եւ միայն անիշխանական անուանելով կործանարար ցոյց տալ զայն հասարակութեան։

Անցաւ Հնչակեան շրջանն ալ ու եկաւ միայլ շրջան—Դաշնակցութեան գործունէութեան շրջանը, որովհետեւ ինչպէս «Արմենիա»ն իր ժամանակին այսպէս ալ «Հնչակ»ը սկսեց կամաց կամաց խարխլիլ, քանդուիլ։ Ա. որ պատճառները եւս շատ որոշ են. ինչպէս ուրիշներ պարզած են մենք համաձայն ենք, որ «Հնչ. կուս.ը» եւս նոյնպէս իր նախնական գործունէութեան շրջանէն մինչեւ վերջը պահելով իր միատեսակ դրութիւնը եւ չի կարենալով բաւականութիւն տալ նոր զգացուած յեղափոխական կարիքներուն, տեղի տուաւ Դաշնակցութեան, որը օգտուելով նախորդներու գործունէութեանց բազմաթիւ երեւոյթներու փորձառութիւններէն, եւ մանաւանդ իր ուշադրութիւնը մասնաւորապէս կեդրոնացնելով զէնք հայթայթելու վրայ, աւելի առաջ անցաւ ու գրաւեց իսկական անկեղծ գործիչներու ուշադրութիւնը։ Դաշնակցութիւնը խարուսիւն չի գնելով տարբեր կուսակցութիւններու եւ իր միջեւ, իսկապէս դարձաւ դրական ապստամբական կազմակերպութիւն, որու միակ նպատակը ժողովուրդը զինելու մէջ կը կայանար եւ ոչ ուրիշ բանի։ Ես անկարող եմ այստեղ երկար ծանրանալով նոյնիսկ իմ անձնապէս ունեցած փորձառութիւններէս հաստատել շարք մը իրողութիւններ մեր վերեւի ըսածները փաստող. ինչ որ ամէն յեղափոխական գործիչի համար ալ խիստ պարզ պիտի ըլլայ։ Ահա այս պարագային «Արմենիա»ի սլաքները ուղղուեցան Դաշնակցութեան դէմ։ Զնայելով Հնչ. եւ Դաշ. ծրագիրներու արմատական տարբերութեանց, մանաւանդ գործունէութեան տեսակէտէն, «Արմենիա» չի վարանեցաւ սակայն ասոր ալ նախորդին, հնչակեանութեան կարդը դասելով անուանել նոյնը ինչ որ Հնչակին ըսած էր եւ թերեւս աւելին ինչ որ մարդուս երեւակայութիւնը չի զօրեր։ «Արմենիա»ի համբաւաւոր խմբագիր դանկին զօր տուաւ, ցոյց տալու համար հասարակութեան որ ատոնք հայութեան համար եկամուտ անհատներ էին եւ ոչ թէ հայութեան կեանքէն եւ վիճակէն հասկցող մարմիններ...

Ի լրումն ամենայնի մենք մէկ փաստ եւս մատնանիշ կընենք Պարոն Փորթուգալեանին, թէ իր սիրելի Աւետիսեանը ինչո՞ւ արդեօք յանձնառաւ հրացանը ուսը երթալ թշնամուն դէմ կռուելու եւ այն կողմերը «ժողովուրդին կոտորելու պատճառ» դառնալու. կը հարցնենք, նաեւ ինչպէ՞ս կը լինի որ Արմենական Ազրիպասեան դեռ 89 թուականին խումբ կը զինէ, լեռը կելլէ կռուի կը բռնուի եւ ահագին իրարանցում կը յառաջանայ ոչ միայն վան, այլ եւ ամէն տեղ ուր որ այդ լուրը կը տարածուի...։

Ահա այսպէս անճահ «Արմենիա»ն չի կարենալով չէնք չնորհք բան մը ըսել գոնէ կը հայհոյէ եւ հասարակութեան մէկ մասին—ըլլայ այդ մասը ամենաազնիւ ու անհասկացող, ոչխարամիտ—կը համոզէ որ Դաշնակցականները մեր թշնամիներն են, որ նոքա հայութեան համար օտարամուտ, խորթ մարդեր են եւ ոչ այլ ինչ։ Ընթերցողը եթէ կարդացած է «Արմենիա»ի գոնէ վերջին համարները, որոնց միոյն մէջ մանաւանդ (29ը թիւ 1899) Վարազ սատրագրութեամբ յօդուածը, կրնայ որոշապէս հաստատել մեր ակնարկութիւնը։ Ես այդ մասին աւելորդ կը համարիմ երկարել. դառնալով իմ բուն սկսած նիւթիս, պիտի ցոյց տամ երկու պատահական տեսակցութիւններէ կազմած կարծիքներս, որոնք չատ իւր են 94 թուականի «Արմենիա»ն յատկանշելու։

Ըսի արդէն որ, մենք հեռացանք Հնչ. կուս. կեդրոնէն, բոլորովին կտրելով մեր յարաբերութիւնն եւ համակրութիւնը անկէ եւ ահագին անջրպետ մը ձգելով մեր եւ անոնց միջեւ։

Այդ ժամանակ Լոնտոն՝ մեզ հետ եւ մեզնէ վերջ եկած չատ մը մեզ քաջածանօթ անձեր կային. որոնք նոյնպէս Հնչ. կուս. կեդրոնի չարք մը զեղծումներուն, զորս Լոնտոնի մէջ աւելի յստակ կը պարզուէր՝ լաւ տեղեակ էին. սակայն ատոնք չի վարանեցան հակառակ իրենց համոզումին կեդրոնի հրահանգներուն անսալով դիմել իրենց նպատակին։

Է.Ծ.

(Շարունակելի)